

## Ակրեդիտիվի համար պահանջվող փաստաթղթեր

- Նախնական հաշիվ-ապրանքագրի պատճենը,
- Հիմնադիրների, տնօրենի և գլխավոր հաշվապահի անձը հաստատող փաստաթղթեր,
- Գործունեության տարածքի/ների սեփականության վկայական կամ վարձակալության պայմանագիր,
- Լիցենզիա (լիցենզավորված գործունեության դեպքում),
- Հարկային տեսչությունից տեղեկանք պարտավորությունների մասին,
- Էլեկտրոնային եղանակով Հարկային տեսչություն ներկայացված վերջին 1 տարվա հաշվետվությունները և հաշվետվություններն ընդունված լինելու վերաբերյալ ծանուցում,
- Գրավ/ների սեփականության վկայական, տեխնիկական անձնագիր, սեփականատերերի անձը հաստատող փաստաթղթեր, ամուսնության վկայական և գրավների լուսանկարներ,
- Իրավաբանական անձի կանոնադրության պատճեն,<sup>1</sup>
- Իրավաբանական անձանց գրանցման պետական ռեգիստրի վկայականի պատճեն (իր ներդիրներով) և ՀՎՀՀ-ի պատճեն (իրավաբանական անձանց դեպքում պահանջվում է ըստ անհրաժեշտության),<sup>1</sup>
- Տեղեկանք իրավաբանական անձանց գրանցման պետական ռեգիստրից,<sup>1,2,3</sup>
- Քաղվածք ռեեստրից՝ բաժնետիրական ընկերության դեպքում,<sup>3</sup>
- Իրավասու մարմնի (ընդհանուր ժողովի) որոշումը վարկ վերցնելու վերաբերյալ:<sup>3</sup>

<sup>1</sup> Փաստաթղթերը պահանջվում են, եթե ՀՀ ԱՆ պետական ռեգիստրի տվյալների շտեմարանում տվյալները կամ փաստաթղթերը բացակայում են կամ սխալ են:

<sup>2</sup> Տեղեկանքը կարելի է ստանալ Բանկից կամ ՀՀ ԱՆ պետական ռեգիստրի գործակալությունից, ընդ որում՝ իրավաբանական անձ հաճախորդների կողմից տեղեկանքի ներկայացումը պարտադիր է, իսկ անհատ ձեռնարկատեր հաճախորդների կողմից պարտադիր է իրավաբանական անձանց գրանցման պետական ռեգիստրի վկայականը իր ներդիրներով չներկայացնելու դեպքում:

<sup>3</sup> Կարող է ներկայացվել Բանկի կողմից ակրեդիտիվը տրամադրելու վերաբերյալ դրական որոշում կայացնելուց հետո:

Բանկում հաշիվ չունենալու դեպքում անհրաժեշտ է ներկայացնել նաև ,ԱԿԲԱ Բանկե ԲԲԸ-ում հաշվի բացման համար անհրաժեշտ փաստաթղթերը (բնօրինակները):

Տարաբնույթ հանգամանքներից ելնելով Բանկի կողմից կարող է պահանջվել լրացուցիչ փաստաթղթեր և տեղեկատվություն: Բանկը, Փողերի վաճառման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին ՀՀ օրենքով սահմանված հաճախորդի պատշաճ ուսումնասիրության նպատակով կարող է հաճախորդից «Ճանաչիր քո հաճախորդին» (“Know your customer”) սկզբունքի հիման վրա պահանջել լրացուցիչ փաստաթղթեր կամ այլ տեղեկություններ, ինչպես նաև բանավոր հաղորդակցման ընթացքում տալ լրացուցիչ հարցեր: Հաճախորդի պատշաճ նույնականացման անհնարինության կամ հաշիվների սպասարկման անհնարինության դեպքում բանկի կողմից մատուցվող ծառայության հասանելիությունը կարող է սահմանափակվել: Ինչպես նաև, Բանկը Ձեր՝ ԱՄՆ հարկատու հանդիսանալու հանգամանքը պարզելու համար կարող է իրականացնել լրացուցիչ տեղեկատվության հավաքագրում, Օտարերկրյա հաշիվների հարկային համապատասխանության ակտի (Foreign Account Tax Compliance Act (FATCA) հիման վրա ԱՄՆ-ի հետ կնքած համաձայնագրի համաձայն: